Երկրորդ տեղը կանանց մեջ պատկանում էր ավագ հարսին, որին տատը դեռ կենդանության օրով պատրաստում էր իր հաջորդը լինելու, մանավանդ, որ նա մշտապես նրա օգնականն էր լինում հաց թխելու և կերակուր եփելու ժամանակ: Կերակուր բաժանելը տատի մենաշնորհն էր: Մեծ շերեփը նրա ձեռքին էր լինում: Նա իրավունք ուներ նստելու տղամարդկանց հացին, թեև մի փոքր մի կողմ քաշված: Տատի և ավագ հարսի արտոնություններն էին պանիր մերելը և ճախարակ մանելը: Կանանց մեջ աշխատանքի բաշխումը դարերի ընթացքում այն աստիճանի որոշակի էր սահմանված, որ սկեսուրը մեծ դժվարություններով էր այդ կարգը խախտում, վախենալով հարսի կողմից բողոքի, եթե այդ հարսին հանձնվում էր ավանդական կարգի համաձայն իրեն չվերաբերող որևէ աշխատանք: Այսպիսով, օրինակ՝ երկրորդ հարսի պարտականությունն էր ալյուր մաղելը, խմոր հունցելը, հաց բաց անելը, երրորդինը տուն ավլելը, սեղան պատրաստելը, կերակուր մատուցանելը, ամաններ հավաքելը և լվանալը, երեկոյան տղամարդկանց ոտները լվանալը, նրանց տուն վերադառնալուց հետո, նրանց լվացվելու ժամանակ, ձեռներին ջուր ածելը և երեսսրբիչ պահելը, հանդի աշխատավորներին կերակուր տանելը: Եթե տան մեջ լինում էր մի հարս ևս, այս վերջին պարտականությունների մի մասն անցնում էր նրան: Մի բարդ գործ էր ընտանիքի անդամների համար անկողիններ պատրաստելը: Միայն շատ նոր ժամանակներն է, որ տների մեջ մտել է լայն և երկար տախտը, սակայն նրա վրա գիշերվա անկողինը պատրաստվում էր երեկոյանից և ոչ թե սարքված մնում էր մշտապես: Սովորաբար գետնին փռվում էր խսիրը, նրա վրա կարպետ կամ գորգ, ապա ներքնակը, բարձն ու վերմակը: Վերմակի փոխարեն երբեմն գործ էր ածվում խիտ-խիտ և թանձր գործած կարպետ: Առավոտյան այս անկողնու բոլոր պարագաները հավաքվում էին մի տեղ, կազմվում էր այսպիսով ծալը, որին հատկացվում էր տախտի վրա մի անկյուն կամ հատուկ շինված բարձր տախտակամած, պատի մեջ շինված լայն պատբեհան: Այս ծալքատեղը ծածկվում էր նախշուն կարպետով կամ բամբակե ծածկոցով և ներս մտնողի ուշադրությունն էր գրավում: Նորապսակ զույգի համար անկողինը պատրաստվում էր առանձին օթախում, իսկ եթե առանձին սենյակ չէր լինում՝ նրանց անկողինը պատրաստում էին Ղարադամի հեռավոր անկյունում: Կինը պառկում էր իր ամուսնու հետ միևնույն բարձին և միևնույն վերմակի տակ: Այստեղից հնուց օրհնանք էր՝

«Մեկ բարձի ծերանա՜ք»[112]:

Մանուկ երեխային ծնողները պառկեցնում էին իրենց կողքին. ավելի մեծ երեխաների համար երբեմն ընդհանուր անկողին էր ձգվում:

Շորերը հանում էր նախ տան մեծը: Փոքր հարսը օգնում էր շորերը հանելու և տրեխները արձակելու ժամանակ, որից հետո հանվում էր նրա ավագ եղբայրը, ավագ որդին և այսպես հերթով բոլոր տղամարդիկ: Ապա կարգը գալիս էր կանանց: Նախ և առաջ պառկում էր սկեսուրը, որին հանվելիս օգնում էր կրկին ամենակրտսեր հարսը: Փոքր հարսը հանգցնում էր ճրագը և անաղմուկ պառկում իր ամուսնու կողքին:

Հարսները հարսնություն էին անում, այսինքն՝ չէին խոսում սկեսրայրի հետ և մեծ տեգրերի հետ մինչև մահ, սկեսուրի հետ՝ առնվազն տասը տարի,

---

112 «Միասին երկա՜ր ապրեք»: